Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, մարտի 14-ին. Թիֆլիս. №11.

## ՊՐՕԺԵԿՏՕՐ




Մի՛ք փախչիլ այդքան արագ,
Իմ սիրելիք բամբասող

Պատիժ, քիւֆուր չունեմ ես
Իմը ծաղր է ու հանաք։

Худож.-Лит. С. Быховa, Тифлис.

Կոստրասեան Բենօ

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԴԷՊՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ




GAUDE HAMUS իգիտուր
Աթոռ ու բութիլ վերցուր։

Քէֆի մէջը ինչ լազաթ
Որ չինի գմփոց ու տուր։

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՐՔԵՐԻՑ



Փող կորզելու համար փողոցներում երեխաներին յափշտակում են։



— Մեր գործը չէ, որ դու հացի փող չունես։ Եթէ այս նամակի համաձայն մեզ փող չտաս, անպատճառ երեխայիդ կը փախցնենք։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Ծրգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, և գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

## ԻՄ ԴԱՐԳԻՐԸ

II

«Վուր իս ասիմ՝ իմացի
«Էշխի մէչըն հիմնացի
«Ինձ հուրեան բիրեան արիր,
«Ասում իս, թէ՝ դիմացի»
ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

Ասում իս թէ՝ դիմացի, վունց դիթեամ դուրթ ու դուրթ, ինչ է, գլուխս իմ մէյդ-նումը չիմ գթի, հէր օխտածնիր, իմացիլ էր՝ «դիմացի» ու չիր իմացի թէ գիթեալ էլ կայ գիթեալ էր։

Դիմացի, արի ու դիմացի, իփ վուր աստուծան ծէրից մինչկի իրիգուն, մէ գլուխ փաթերակնիր է, վուր իմանում իս ու գի-գիս վուր էսօր էրուց էտ շատում փաթե-րակնիրը գլխնիրից էլ է գալու։

Արի ու դիմացի, իփ վուր իմանում իս՝ էսօր փլանքեատը, վուր մօդիկ բարեկամ էր փլանքեատին, ապանիլ ուզից, չունքի մէչտիկը հաշիւնիր կէր։ Դիմացի. վունց գիթեայ մարթ, իփ վուր միզմէն ամեն մէ-կը հաշիւնիր ունէ ու հետարի համա, վուր մարթիր ապանինը, ով գիդի մէ էրկու իրիք տարուց եզով, էլ մարթ չիթեայ աշխրքիս է-րեսին։

Դիմացի կուէ։

Տօ, վունց գիթեամ, իփ վուր մէ գլուխ էս իմ իմանում՝ Գասպար, իմացած կուլիս, վուր փլանքեատի կնիկը փախիլ է կուէ, մար-թուն, էրեխեքերին թողիլ է անդիր, մէ դեսպա տանու մարթ սիրեկան է գթի ու չքիլ ին։

Վի մաշ էլ դանայ տանը օչովին չթողնի մարթ։

Բաս ալ ու հացը վունչիչ էլի։

Դիմացի կուէ, տօ, անպաքանդնիր վունց գիթեամ, դանա իս քար ինմ թէ էրկաթ, վայ իս ձիր մարթ տաղին ի անչախմ. մարթը էս տահաթին տիղ ունենայ էն էլ բանկումը, Ալէքսանդրապօլում, հարուստ կնիկ օղլուշաղ, տնիցը մուլք ու կալք ու... էլի գուղերու շալկայ չինի, բանկը՝ խիղճ ու ախկատ խալխի համա չինած բանկը կարիլ ամայ. յա՛ւ, իրա միլյուք բեխերիցը, բուղալտրութիւնիցը չամանչէ, բաս կարմիր գալուստիկիցը, սիպտակ կրախմալած մանժէտ-մանիշկիցն էլա չըկիտի ամանչի։

Մէ կարթացէք, թէ ձիր մամի դանդրո-տան կու սիրիք էշմիածնի «Արարատ» ամ-սագրքէթը, ինչ գուզիս ամէ, մարթ վուր էտ կարթայ ու գիթեայ։

Դիմացի կուէ։ Տօ, դանայ գիթեալը հանաք մասխարութիւն գիդիք։

Հայ օջախնիրումը, էն օջախնիրումը վուր մեզը ու կարաք էր վախտով լիքը, հիմի դարիշխանա է (լիդի) մափ. տունը մուտարիլ է։

Աստուձ հոգին լուսաւորէ՝ միր Հայրի-կին էլ, էտ բանը վուր տեհնում է, հրամանք է տալի ու հիմի ով ինչ դուզէ միր «ամուսիններից» էն է անում, էսօր փախչում ին, էքուց բաժնւում, չունքի համ մարթն է անդձից ասիմ...... անում համ կնիկը ու մէ մէ վախտ էլ Սինօթը թէկի տեհնում է, վուր մարթ ու կնիկ իրար հիդ չին կա-նում ապրի, չունքի խասիաթնիրով մէկ-մէկու չին հաւնում, բաժնւելու հրամանք չի տալի, էնդուր վուր «անհաւատարմութին» չին արի կուէ, ջէր. ու միր Սինօթը ուզում է վուր ջէր՝...... ին անին, իժում բաժնւելու իրաւունք տայ։

Վա դիմցի կուէ, ինչ հիշա հիշա էլ իք խօսում, տօ դանա կուլի գիթեալը, իփ վուր միր էջմիածնի Սինօթն էլ, Սինօթը, Սինօթը վուր հոգու ճամփի պադարոժնէք է տալի, էնէնց բէչէնիէք է գրում, վուր «Մուրճ» ու «Մշակ» գազէթնիրին էլ կու-ամչնային. վունց վուր մէ ինչ վուր Դորը-ցի Միխակ Ումիկովին չին բաժնում իրա կնգանմէն, չունքի սա գժուիլ է ու չունքի փակի վախտն էլ Ումիկովը ասիլ է թէ՝ «մինչկլի մահը ակէր իմ կուէ» — ու Թիֆլիսեցի Օսէփէնց Արշակին կի հրամանք ին անում մէ ուրիշի հիդ փսակւիլը, չունքի սրա կնիկը՝ Թամարը «մեղամտեցել» է էլի։

Հայ հայ...

Դիմացի կուէ, դիմանամ, չը դիմանամ մաշ ու մէ փիս խասիաթի չըդտանամ իփ վուր... Է՛ էլ ինչ ասիմ, դանա գուք չիք գիդի ախ-պէր։

Ասած է՝

«Ասլուուբին մէկ սաա.—

Անասլին հազարն էլ չի օտկի» կուէ։

Էս անդէրը, էսօր մէ փիս վուտի վրէն իմ կաղնի, վուր ով գիդի, իս էլ չկարենամ դիմանայ. ու իժում, իժում՝ ինչ կուլի ձիր հալը։

Գուղէի գնամ ջուրը ննդնիմ, էգեըս խեղդուիմ. մաղրամ տեհնում իմ վուր ջէր ուրտ է, իժում մրսիմ ու իժում վունց դիմեամ։

Գասպար Կալառագեանց

---

## ԵՐԵԽԱՆ

(А. Н. Плещеевъ)

Դագաղի մէջ մայրն է պառկած
Ծաղիկներով զարդարուն.
Իսկ երեխան մօտը կանգնած
Ծաղիկներին է նայում.

Ծաղիկները արա՛ն, արա՛ն,
Կարծես հէնց նոր են բուսել.
Դեռ այդպիսի վարդ ու շուշան
Նա իւր կեանքում չի տեսել.

Եւ հնչում է աղերսալից
Մանկան ձայնը անուշակ.
—«Մայրիկ, մայրիկ ընծայիր ինձ,
Գոնէ մի հատ մանուշակ»։

Բայց չստնալով պատասխանի
Ու երեխան մռմնջաց.
—«Դեռ քնած է, առաւօտեան
Նա կընծայի անկասկած»։

Ու դուռս եկաւ կամա՛ց, կամա՛ց
Նորից եկաւ դռան մօտ.
—«Զարթի՛ր, մայրիկ, նա մռմնջաց,
Առաւօտ է, առաւօտ»...

Ս. Բագէն

---

## ՆԻՍԻԱ ԶԱՆԳԻՆՈՒԹԵՆ

Շոգը զօռիր էր. Ջոկովի թամրնիրը թօփ էին էղիր հով պատի տակը, Նի-սիա փարայ կաշխատէին կը։

—Գողո՛ր, ինչքան փարայ տամ, օր զանգինէնաս։

«Սայթ Թիֆլիզի մէջը վերքան դող կայ, անքան 5 նոց օր տաս, ալ քէ-ֆիս քէֆ չի հասնի։

—Ղազար, դու վերքան գուզիս կը։

«Ղարսի ու Էրևանի գեղերը վեր-քան ազէտ ալէր-ալէր կայ, անքան մա-նէթ ունէնայի, հէրիք էր։

—Սերգէ, դու վերքան գուզիս կը։

«Կավկազի մէջ վերքան կոշտասկեր դատաւոր կայ, անքան կոպէկ օր տաս, թամամ գանգինեամ կը։

—Կարօ, դու վերքան գուզիս կը։

«Սատմբօլ ու Թիֆլիզ վերքան գա-զէթաճի ադամեր կան, անքան շահի ունէնայի, բիթուն գանգիններին հետ օրթալ գլէի կը։

—Քօչար, դու վերքան գուզիս կը։

«Վերքան մեր ազգի մէջը ձրիակեր վարդապետ կայ, անքան 10-նոց ու-նենայի, ադավարի կապրէի։

—Մկօ, դու վերքան գուզիս կը։

«Աղբար, մի քան օր նախայ է «Նարծ» գազէթին մէջ, մէ տարւայ մէջ, վերքան օր քիւֆուր է ադած, անքան մանէթ օր տաս, Մանթաշովի հետ օրթալ գլէի կը։

—Սահակ, դու վերքան գուզիս կը։

«Սատմբօլ վերքան հոս հոս կայ, անքան շահի ունէնայի, ալ յմօր մահս հէրիք էր բնձի։

Ղալաչի Մարգար

## ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԷՊԻ ԱՆԻ

„Բագւի Հ. Կուլտ. Ընկ. Ընդհանուր. Սեկցիան մայիսի առաջին կիսին էքս-կուրսիա է կատարելու դէպի Անի։

Սեկցիայի նպատակն է ծանօթացնել էքսկուրսանտներին հայոց նախկին մայ-րաքաղաքի հրաշակերտների և անդագրա-կանի հետ։

*Լրագրներից*

Սիրում եմ ես բաղուցիներին, բայց և չեմ սիրում ուրիշ տեղացիներին—իսկ բաղու-ցիներին սիրում եմ առաւել նրա համար, որ առհասարակ լօթիանալ սիրող են։

Իսկապէս որ լօթիանալ-դարդիմանդ։

Եւ դա միթէ հասկանալի չէ։

Մայիսի սկզբներին, բաղուցիները, յան-կանալով մի քանի օրով մոռանալ այն ժի-խորը, այն սարսափ-շորշոփները, որ տեղի են ունենում Նաւթաշխահրի Սողոմ-Գոմո-րում՝ քանի մի օրով, տասն են, ուզում են և իրենց նախահայրերի Բագրատունեաց արքաների աթոռանիստը այցելել և տա-տեղեան հաւատարիմնալ, որ դեռ շատ դա-րեր առաջ, հայը եղել է աւելի կուլտուրա-կան, աւելի մտաւորական, աւելի գեղար-ուեստագէտ, աւելի առևտրական և այլն, քան այժմ և այն էլ Բագւում։

Հաւանական է բաղուցի լօթիները ու-զում են իրենց և նախահայրերի մէջ հա-մեմատութիւններ անել։

Գովելի է։

Ես գոնէ այդպէս եմ մտածում, այլապէս ինչ միտք, կամ ինչ օգուտ, որ նրանք պիտի գնան մօտ 50—60 հոգով այնտեղ, առան-ձին ապօն վագոնով և առանձին մակույկով Ախուրեանի վրայով։

Իսկապէս այդպիսի մի ամենադրութեամբ էքսկուրսիայի գնալ և տատեղեան ծանօթա-նալ նախահայրոց յիշատակների հետ, դա այո՛ նշանակալից է։

Կեցցեն բաղուցիները։

Կեցցեն և Բագւի լօթիները։

Կեցցէ, կեցցէ, կեցցէ և Կուլտուրական ընկ. Գեղարուեստական Սեկցիան որ կարո-ղացել է համոզել 50—60 անձանց անձնա-զո՛հ լինել և իրենց աչքով տեսնել նախ-նեաց մեծութիւնը և զաւակների՝ իրենց փոք-րութիւնը։

Փոքրութիւն, բայց միթէ իրօք արդիք-ժամանակակից հայը այնչափ էլ փոքր է։

Մի ձայն, մի ինչ որ ընադդ ինձ ասում է, որ ոչ միայն փոքր է, այլև... գաճաճ է։

Գաճաճ է, որովհետև նա նոր միայն ու-զում է տեսնել նախահարց փառքի ճա-ցորդները և տատեղեան հաստատել, որ այդ հեռու չէ արքայութիւնը մեզանից։

Բայց պարոններ, լօթիներ

Կուլտուրական գեղարուեստականներ.

Արդեօք ինչն է ասխղում ձեզ իրօք այդ-պիսի մի յիմարութիւն անել, Անի գնալ, աւերակներ տեսնել, աւերակներ, որոնք իսկի չեն էլ երևում և հողի հետ հաւա-սարել են։

Գուցէ ուզում էք քէֆի գնալ։

Բայց Անին ինչ քէֆի տեղ է, այնտեղ չկան կաֆէշանտաններ, փարս ու օպերետ-ներ, այնտեղ չկան կարաւող կանայք և այլ յարմարութիւններ... Անիում կան երկու «ЧУДАКЪ»-ներ Միքայէլ վարդապետը և ճար-տարապետ Թորոս Թորամանեանը։

Ես որանց ամենայն իրաւամբ ЧУДАК-ներ եմ համարում, որովհետև թողած Բագւի կեանքի յարմարութիւնները, ապրում են Անիում, մինչ հողի տակի ճացորդ-ներից վերակազմութիւններ անելով և միւսն էլ հողի տակից ագատուածներին պահել պահպանելով։

Եւ այդ ЧУДАК-ները ապրում են Անիում, մերթ քաղցած ծարաւ, մերթ ցուրտ ու շոգին և միայն նրա համար, որ դուք, լօ-թիներ, հաճէք երբեմն էքսկուրսիաներ կա-տարել։

Միքայէլ հայր սուրբը, սովոր վանքի չոր հացին, երեք հարիւր րուբլիով իր և ծառաների գլուխը պիտ պահէ։

Իսկ ճարտարապետ Թորոս Թորամանեանը իր հազարները այդտեղ է փռում, որպէսզի իմանայ, թէ մեր նախահայրերը մեզ նման գեղարուեստագէտներ են եղել, որ-պէսզի կարողանայ աւելի տեսականօրէն և մեզ՝ և ձեզ ցոյց տալ, որ մեր նախնիքը ի-րօք աւելի խոշորներն են եղել, քան թէ մենք կանք։

Եւ ճարտարապետ Թորամանեանը, հինգ տարի ապրելով Անիում և Անիով, դատապար-տել է իր զրպանները տեղական կաֆէշան-տաններում... ոչ մեղայ Աստծու, փարսե-րում, կլուբներում թղթախաղի, էլի նոյնաթ չար սատանային, նաւթային... էս ինչ է ինձ հետ լինում, Տէր իմ Աստուած... դա-տարկում է իր հազարները Անիում և չա-ւարտած գործը, այժմ թողնում է Անին և կրկին հետևում Բագու... կրկին մեղայ Աստծու... իր հայրենիք, Թուրքա-Հայաս-տան։

Եւ գնում է հիասթափուած։

Արդ, բաղուցիներ, ճանաչում էք դուք արդեօք Թորամանեանցին, այո ճանաչում էք, որովհետև մի տարի առաջ դուք նրան Ա-նիից հրաւիրել էիք Բագու, անձամբ անձին ծանօթանալու նրա գործերի հետ և գնա-հատելով այն, այնուամենայնիւ տալ էիք 30 րուբլի ճանապարհածախս և տաս օր էլ Բագւում ապրելու միջոց կրկին վերա-դառնալու Անի և գործը թերի չթողնելու համար։

Խոստացել էիք հարկաւոր տնօրինել, միջոց տալ Անիում ապրելու և վերջն էլ՝ գործը ապելուն, որպէսզի աշխարհն տեսնի թէ ինչպիսի հայեր են եղել ժամանակով։

Եւ հաւանական է ձեր խոստումը կատա-րել էք, որ ճարտարապետ Թորամանեանը հինգ տարի արևելոց յետոյ և ձեր տուած 30 րուբլիով գործը աւարտելով, թողնում է Անին գնում է, իսկ դուք էլ ահապարում էք էքսկուրսիա կատարել ձեր տուած 30 րուբլիների արդիւնքն ու աւերակները տես-նել, ձեր սեփական աչքերով։

Կեցցէք դուք։

Այ թէ ինչի համար եմ ձեզ սիրում։

Բայց Անի եղած ժամանակ խնդրում եմ ճարտարապետ Թորամանեանից ձեր տուած 30 րուբլիների հաշիւը պահանջել, հաւա-նական է կայ դեռևս ճացորդ, գուցէ ճա-ցորդով էլ պալատները վերանորոգէք։

Աւլշալկուենի

## ՏԱՓԱԿ ՋՐՈՅՑՆԵՐ

Անգլօ-բօէրական պատերազմի սկզ-բներին, մի անգլիացի ուզելով զար-մացնել բօէրին իր հայրենիքի մեծու-թեամբ, ասաց նրան.

—Գիտէք, բրիտանական կայսրու-թեան մէջ արեգակը երբէք մայր չէ մտնում.

—Եթէ այդպէս է, ուրեմն Աստուած չ'հաւատալով ձեզ, միշտ լոյսի տակ է պահում, որպէսզի դուք մթնում չար

բաներ չը գործէք.—պատասխանեց նրան բոէրը։

—

Օկսֆորդի թանգարանի հնութիւնների շարքում գտնւում է մի գանգ, որը համարւում են անգլիական նշանաւոր պետական գործիչ Կրոմւելի գանգը.

Մի այցելու, նայելով գանգին, ասաց

—Բայց չէ՞ որ սա երեխայի գանգ է։

—Օ, ո՛չ,-պատասխանեց նրան առաջնորդող թանգարանի պահապանը, —դա անկասկած է, որ Կրոմւելի գանգն է, միայն նրա երեխայ ժամանակի գանգը։

—

—Խնդրեմ, մի բան ասէք ինձ լեարդի ցաւի դէմ.—դիմեց դեղագործին մի այցելու։

—Գուտկինսի պիլուլները ամենալաւն են,—պատասխանեց դեղագործը։

—Ոչ, մի ուրիշ բան ասէք, բայց ոչ այդ պիլուլները։

—Բայց բոլոր պրոֆեսորները առաջարկւում են այդ դեղը, որին բոլոր հիւանդները նոյնպէս գովում են. հաւատացէք, դրանք ամենալաւ կերպով են ներգործում։

—Ոչ, սուտ է, ես դրանց չեմ հաւատում։

—Սակայն ինչու չէք ուզում գնել փորձել,—պնդում էր դեղագործը.

—Որովհետև, գիտէք... ես ինքս եմ Գուտկինսը։

Դ-Ն-Լ.

## ԼԱՒ ՄԵՌԵԼ

Ամենեին ինձ մեղադրելու իրաւունք չունէք, եթէ ես ամեն բանի էլ ծաղրական կողմը եմ տեսնում։ Մօրից այդպէս եմ ծնւած և ինչքան յիշում եմ ինձ, դեռ երեխայութիւնից էլ այս անտանելի յատկութիւնն ունէի։

Ինչքան նախատինք, թուք ու մուր եմ տարել այդ վատ բնաւորութեան համար։ Օր չէր լինի, որ մէկին չծաղրէի ու արժանի վարձատրութիւնը չստանայի։ Բայց չընայելով ամեն օր կրկնւող այս երևոյթներին, մնացի անուղղայ և այժմ էլ, որ ալիտակած մօրուքի տէր եմ, այդ վատ սովորութիւնից չեմ կարող ձեռք քաշել։ Շատ ուղիղ են ասել, որ սովորութիւնը դառնում է երկրորդ բնութիւն։

Իմ ծաղրից ազատ չեն մնացել, ծնողներս ազգականներս, անգամ փոքրիկ զաւակներս, էլ ո՜ւր կը մնան ուրիշները։ Եւ երբ ես այսօր հրապարակով ծաղրեմ մէկին ու մէկից, առանց ներողութիւն խնդրելու կասեմ, որ շատ էլ պէտք չէ։ Առաջին, ես բոլորովին ապահովւած մարդ եմ, ինչպէս կը տեսնէք առաջարկութիւնիցս, երկրորդ, ծաղրելուցս յետոյ իմ հասցէին ուղղւած բոլոր հայհոյանքներին՝ ծաղրով կը պատասխանեմ և երրորդ, որ ամենից գլխաւորն է, չեմ կարող լրջութեամբ վերաբերւել մի որևիցէ հարցին, ինչքան էլ կուզէ նա ողբերգական լինի։

Այս յառաջաբանից յետոյ, որն անհրաժեշտ էր ինձ ծանօթացնելու համար ընթերցողներիս, անցնենք գործի։

Նախ անցեալ կիրակի օրը մի լաւ մեռել էինք թաղում։ Ես համոզւած եմ. որ հենց այս տեղ կը կանգնէք ու կը հարցնէք—միթէ լաւ մեռել կը լինի։

Նախ քան ձեր հարցին պատասխանելը, կասեմ թէ ինչուց է, որ դուք այդտեղ կանգ կառնէք ու հարց կտաք։ «Լաւ» խօսքըն առհասարակ մենք գործ ենք ածում, երբ մի որևէ ապրանք ծախելու ենք լինում։ Եւ որովհետև, մեռելը դժւար թէ ծախող լինի, իսկ առնող երբէք չի ճար-

## ՖԵԼԻԷՏՕՆ

### ԳՕԳՕԼ

## „Քիթ“

(ծննդեան հարիւրամեակի առթիւ)

I

Մարտի 25-ին Պետերբուրգում մի անբնական տարօրինակ դէպք պատահեց։ Վազնեսենսկի հրապարակում ապրող սափրիչ Իւան Եակովլևիչը. (ազգանունը կորել էր ցուցանակի վրայ, ուր նկարած էր մի պարոն, մէկ երեսը սապոնոտած ու տակին էլ վերտառութիւնս «և արիւն կառնեն,» ոչինչ չէր գրած), այս Իւան Եակովլևիչը բաւական վաղ զարթնեց ու տաք հացի հոտ առաւ։ Մի քիչ մահճակալից բարձրանալով, նկատեց որ ամուսինը, բաւականին յարգելի տիկին ու կոֆէ շատ սիրող, վառարանից դուրս էր հանում տաք-տաք թազայ եփած հացերը։

«Պրասկովեա Օսիպովնա, ասաց Իւան Եակովլևիչը, այսօր կոֆէ չեմ խմելու, այլ ցանկանում եմ սոխ ու տաք հաց ուտել»։ (Թէպէտ Իւան Եակովլևիչը ցանկանում էր երկուսն էլ միասին, բայց բոլորովին համոզւած էր, որ չի կարելի երկու բան միասին պահանջել, որովհետև Պրասկովեա Օսիպովնան շատ չէր սիրում այդ տեսակ քմահաճոյքներ)։ «Աւելի լաւ, թող յիմարը միայն ցամաք հաց ուտէ», մտածեց ամուսինն ինքն իրան, «աւելացած կոֆէն ինձ բաժին կը հասնի» և մի հաց ձգեց սեղանի վրայ։

Իւան Եակովլևիչը, վայելչութեան համար շապկի վերայից հագաւ ֆրակը և սեղանի առաջ նստելով, աղ ածեց, սոխի երկու գլուխ պատրաստեց, ձեռքն առաւ դանակը ու հանդիսաւոր կտրատեց հացը։ Հացը երկուսի անելով մէջը նայեց և ի զարմանս իր՝ տեսաւ սպիտակին տուող մի բան։ Իւան Եակովլևիչը զգուշաւոր շօշափեց. «պինդ է», ասաց ինքն իրան, «ինչ կարող է լինել»։

Մատները կոխեց ու դուրս քաշեց—քիթ։ Իւան Եակովլևիչի ձեռքերը թուլացան, աչքերը տրորեց, շօշափեց, քիթ, որ քիթ և կարծես թէ մէկ ծանօթի քիթ։ Սարսափը տիրեց Իւան Եակովլևիչի երեսին, բայց այդ սարսափը ոչինչ էր նրա ամուսնուն տիրած կատաղութեան դէմ։

«Այդ ո՞րտեղ, գազան, քիթը կտրեցիր», բղաւում էր նա բարկութեամբ։ «Սրիկայ հարբած, ես ինքս ոստիկանութեանն իմաց կը տամ, աւազակ. տեսար ես երեք մարդուց լսել եմ, որ դու սափրելու ժամանակ այնպէս ես քթերը քաշքաշում, որ հազիւ են տեղերը կպած մնում։

Բայց Իւան Եակովլևիչը ոչ մեռած էր, ոչ կենդանի. նա ճանաչեց, որ այդ քիթը ոչ մէկ ուրիշինն էր, բացի կոլեժսկի ասեսոր Կովալեովից, որին նա սափրում էր ամեն կիրակի և չորեքշաբթի օրերը։

—Սպասիր, Պրասկովեա Օսիպովնա, ես կը փաթաթեմ նրան փալասի մէջ և կը դնեմ մի անկիւն, թող մի քիչ այնտեղ մնայ, յետոյ դուրս կը տանեմ։

—Լսել անգամ չեմ ուզում։ Ես թոյլ տամ որ իմ սենեակումս կտրած քիթ մնայ, հացի կուտ. միայն ածելին կաշու վերայ սրել գիտէ, իսկ իր պարտականութիւնները շուտով բոլորովին կը մոռանայ։ Անառակ, անպիտան։ Ախ դու ապուշ, յիմար քիւթուկ։ Դուրս, դուրս տար, չքացուր ուր կուզես, չեմ ուզում որ հոտն անգամ առնեմ։

Իւան Եակովլևիչը մնացել էր սպանւածի պէս կանգնած։ Նա մտածում էր, մտածում ու չգիտէր ինչ անէր, «սատանան գիտէ, թէ ինչպէս կատարւեց», ասաց նա վերջապէս ականջի յետևը քորելով. «երեկ վերադարձիս հարբած էի, թէ ոչ, հաստատ չեմ կարող ասել։ Իսկ բոլոր նշաններից երևում է, որ այս անցքը չլինելու բան է. որովհետև հացը եփելիք է,—եփած է, իսկ քիթը բոլորովին այլ բան է։ Ոչինչ չեմ հասկանում։ Իւան Եակովլևիչը լռեց։ Միտքը, թէ ոստիկանները կը գտնեն իրա մօտ քիթը ու կը մեղադրեն, բոլորովին գժւացրեց նրան։ Արդէն նրա աչքին երևում էր արծաթով բանած գեղեցիկ կարմիր օձիքը, թուրը... և նա ամբողջ մարմնով դողում էր։ Վերջապէս նա շորերն ու կօշիկները հագաւ, վրան քաշեց այդ բոլոր ցնցոտիները և Պրասկովեա Օսիպովնայի ծանր

սիլ, դրա համար էլ ձեր ականջին խորթ է թւում «լաւ մեռել» խօսքը։

Բայց առաջէք խնդրեմ, ինչու պիտի լաւ մեռել չասեմ, երբ մէկը մեռնում է օրինաւոր կերպով, երեք չորս բժիշկների ձեռքերի վրայ, շրջապատուած իրեն սիրող ընտանիքով, բոլորովին համոզուած, որ սրբութեամբ կատարել է իր մարդկային ամէն պարտականութիւնները և խուռն բազմութեան ներկայութեամբ, զգեստաւորուած եղեւնագոտով ու քահանաներով, մի քանի ճառախօսներով պիտի թաղուի։

Տեսնում էք ուրեմն, որ մեռելը խակապէս լաւն էր, թէպէտև ծախսելու ամենևին մըտադրութիւն չունեմ։

Սակայն հարցն այս անգամ բոլորովին ուրիշ բան է։

Ես գնում եմ մի շատ պատւական մարդու յուղարկաւորութեան, ինչ երկարացնեմ, աշուղ Ջիւանու թաղումին։ Ուստա Ջիւանուն երեխայութիւնից սիրել եմ և դեռ մեռնելուց յետոյ էլ սիրում եմ ու յարգում։ Ո՞րքան վայել ու պատշաճ է այս դէպքում լուրջ ձայնը։ Ես լուրջ ձայնը գիտակցութեամբ էլ գնացել էի, բայց թողնում եմ մարդու իրան ուզածն անել։

Հենց էն է, տէրտէրները վերջացրել էին և պատրաստւել էին սիրելի հանգուցեալին փոսն իջեցնել, մի կարճլիկ աղայ կանգնեց տէրտէրների տեղը, հազաց, ու սկսեց խօսել։ Ես հեռու էի կանգնած, հատ ու կըտոր խօսքեր էի լսում նրա ասածից, բայց ինչպէս երևում էր դէմքից ու շարժուածքներից, ինքը շատ էր դժւարանում անսայթաք խօսել։ Ձայնը դուրս չէր գալիս, ճզճզում էր, խեղդւում, խզզում և կարմրել էր ճակնդեղի պէս։ Թէպէտ շատերն ասում էին, թէ կարմրել էր ամօթից, բայց ես չեմ հաւատում դրան։ Մենք էլ էինք ամաչում խօսողի տեղը, գուցէ իրանից էլ մի քիչ շատ, ուստայ Ջիւանին էլ դագաղի մէջ անպատճառ ամաչում էր, բայց ոչ մէկս էլ չէինք կարմրել ու ձանձրանալով և ամաչելով լըսեցինք մինչև վերջը։

—Փառք Աստծու, ասացի, պրծանք։

Չէ՛, տեսնեմ մէկ ուրիշն եկաւ սրա տեղը կանգնեց ու սկսեց դարձեալ ճռճռալ։ Ա՜խ ուստայ Ջիւանի, մտածում եմ ես, ո՞վ գիտէ ինչ անհամբերութիւնով շտապում ես շուտով մտնել քեզ համար պատրաստուած փոսը։ Բայց չէ՛, ճառախօսը երկարացնում է և ուստայ Ջիւանին դագաղի մէջ տանջւում է նրա առաջ, գուցէ աւելի շատ, քան երեք ամիս անկողնի մէջ, բժիշկների ձեռքի տակ…

Յետոյ մի բանաստեղծութիւն կարդում է շապիկ հագած մի տիրացու, մի աշուղ վրացերէն տառերով գրած հայերէն ոտանաւոր, թէ ձեռնաւոր է կարդում։ Ապա մի աշակերտ, իսկ Ներսէսեանցու առածներից «յուսանելն հեզգք և յուսուցանելն ամբարտաւանութեամբ պատրաստք» ճզճզում է, փրփրում և նախատինք է թափում յուղարկաւոր հասարակութեան, չգիտեմ ինչու համար։

Նրանից յետոյ ուրիշներն էլ են խօսում և բոլորի խօսածների մէջ նախատինք ու անբաւականութիւն յուղարկաւոր հասարակութեանը։

Յուղարկաւորները տարան այդպան նախատինքը, առաջին, հաստատ համոզուած լինելով, որ ուստայ Ջիւանին բոլորովին անմասն է այդ բարբանջանքներին, երկրորդ, առհասարակ ընդհանրութեան ուղղուած նախատինքը, ամէն մարդ կարծում է, թէ կողքին կանգնածի համար են ասում, ինքը բացառութիւն է։

Իսկ ես մէկ կողմ կանգնած, տեսնում էի այս ամէնը։ Հիմայ դուք դատեցէք կարո՞ղ էի լուրջ մնալ։

ՄԻԼԻՈՆԵՐ

## ՓՈՔՐԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Եթէ վարդը բոյր ունի, կինը— բուրմունք։

—

Եթէ լաւն է կնոջ աչիկ, մի ըլ-լանար առնել պաչիկ։

---

յանդիմանութիւնների ուղեկցութեամբ, քիթը փաթաթեց փալասի մէջ, դուրս եկաւ փողոց։

Կամենում էր մի տեղ խոթել նրան, կամ դարպասի տակ թմբի մէջ, կամ պատահմամբ վրայից վար ձգէր ու ծուէր մի ուրիշ փողոց։ Բայց դժբաղդաբար պատահում էր ծանօթ մարդ, որ իսկոյն սկսում էր հարցնել։

«Ո՞ւր ես գնում», կամ «առաւօտ կանուխ ո՞ւմ ես սափրելու», այնպէս որ Իւան Եակովլևիչը չէր կարող պատեհ բռնել գտնել։ Մի ուրիշ անգամ նա արդէն վար ձգեց պրծաւ, բայց քաղաքապահը նիզակով ցոյց տալով, «վերցրու, բան վար ձըգեցիր»։ և Իւան Եակովլևիչը ստիպուած վերցրեց քիթն ու պահեց գրպանում։ Յուսահատութիւնը նրան տիրեց, մանաւանդ, երբ փողոցներում անընդհատ ժողովուրդն հետզհետէ սկսեց շատանալ մագազինների ու խանութների բացւելու հետ։

Նա վճռեց գնալ Իսաակեան կամուրջի կողմը, չի՞ յաջողուիլ արդեօք մի կերպ նետել Նևայի մէջ… Բայց ես մի քիչ մեղաւոր եմ, որ մինչև հիմայ ոչինչ չասացի Իւան Եակովլևիչի մասին, մի մարդու, որ շատ կողմերով յարգանքի արժանի էր։

Իւան Եակովլևիչը, ինչպէս բոլոր ռուս կարգին արհեստաւորները, սոսկալի հարբեցող էր և թէպէտ ամէն օր սափրում էր ուրիշների ծնօտները, բայց իր սեփականը յաւիտեան չէր սափրած։ Նրա ֆրակը (Իւան Եակովլևիչը սերթուկ երբէք չէր հագնում) խատուտիկ էր, այսինքն սև էր, բայց ամբողջովին ծածկւած դարչ-դեղնագոյն և ճերմակաւուն խնձորիկներով, օձիքը փայլում էր, իսկ երեք կոճակների տեղ, միայն թելեր էին կախւած։ Իւան Եակովլևիչը մեծ ցինիկ էր և երբ կոլեժսկի ասեսոր Կովալեովը սափրւելիս սովորաբար նրան ասում էր «Իւան Եակովլևիչ, ձեռքերիցդ միշտ հոտ է գալիս», Իւան Եակովլևիչը պատասխանում էր նրան հարցմունքով, «ինչու պէտք է նրանցից հոտ գայ»։ «Չգիտեմ, եղբայր, բայց հոտը գալիս է», ասում էր կոլեժսկի ասեսորը, իսկ Իւան Եակովլևիչը քթախոտը քաշելով՝ սապնում էր նրա երեսն էլ, քթի տակն էլ, ականջի յետևն էլ, ծնօտի տակն էլ, մէկ խօսքով, որտեղ սիրտն ուզում էր։

Այս յարգելի քաղաքացին արդէն գտընւում էր Իսաակեան կամուրջի վրայ։ Նա առաջ շուրջ նայեց, յետոյ կռացաւ ճաղերի վրայ, իբրև տեսնելու, թէ կամուրջի տակից շատ ձուկ է լողում և փալասով փաթաթած քիթը կամացուկ բաց թողեց։ Նա զգաց, կարծես տասը փութ ծանրութիւն վրայից պակսեց։ Իւան Եակովլևիչը մինչև անգամ ժպտաց։ փոխանակ գնալու աստիճանաւորների ծնօտները սափրելու, նա ուղղւեց այն հաստատութիւնը, որի վերնագիրն էր «կերակուր և չայ», խնդրելու մի բաժակ փունշ, երբ յանկարծ նկատեց կամուրջի ծայրում, բարեվայել արտաքինով, լայն բակենբարդներով, եռանկիւնի գլխարկով ու թրով թաղական ոստիկանին։ Նա կանգնած տեղը չորացաւ, իսկ թաղական ոստիկանը մատով կանչում էր նրան և ասում. «մէկ արի այստեղ, սիրելիս»։

Իւան Եակովլևիչը, գիտենալով ձևը, դեռ շատ հեռուից գլխարկը հանեց և մօտենալով համեստութեամբ ասաց, «առողջութիւն եմ ցանկանում ձերդ ազնւածնութեանը»։

—Ոչ, ոչ, եղբայր, ոչ ձերդ ազնուութիւնը, այլ աւելի լաւ է ասա, ինչ էիր անում կամուրջի վերայ կանգնած ժամանակ։

—Աստուած վկայ, տէր, գնում էի սափրելու և նայում էի թէ գետն արա՞գ է հոսում։

—Ստում ես, խաբում։ Դրանով չես պրծնիլ։ Համեցէք, պատասխանիր։

—Ձերդ ողորմածութեանը շաբաթական երկու երեք անգամ պատրաստ եմ առանց հակաճառելու սափրել, պատասխանեց Իւան Եակովլևիչը։

—Է՛, բարեկամ, դրանք դատարկ բաներ են, ինձ երեք սափրիչ ածիլում են ու դեռ իրանց համար էլ մեծ պատիւ են համարում։ Իսկ դու, դու համեցէք ասա, թէ այն տեղ ինչ էիր անում։

Իւան Եակովլևիչը գոյնը գցեց. բայց այս տեղ անցքը բոլորովին ծածկւում է մթութեամբ, ու թէ յետոյ ինչ եղաւ, բոլորովին յայտնի չէ։

Կը շարունակուի

—

Դրախտի անուն չէ թէ Եդեմ
—Սիրող կնոջ մի սիրտ փեսմ:

—

Ալ արշալոյս—ցող թաթախուն,
սիրող կնոջ—սրտին գեղուն:

—

Տանջանք է կեանք,
Ի՞նչ—չարչարանք,
Թէ որ կնոջ մի սիրող սիրտ
Չէ սփոփանք:

—

Մեծ փարոսը—նաւի փրկիչ
Սիրող կինը—սրտի մրկիչ:

---

## Մ Ի Ն Ձ Պ Ա Ս

*Պապլիս երգած «չէիր» նէրից*

I

Հարէս էկաւ մեր մենձ պասը,
Էլ չենք ուտի թանէ ապասը,
Հիգը բերից լօրի խանք.
Ղանձիլ աղէն, մախուխ ջանը:
Բակլա, սիսեռ, քարթլի մաշը,
Երկու ջուրայ մուկաշաբը,
Ցուլիս պիրէն, խաղանախը,
Կրուտի ձէթն ու չիրթաղը:
Կարտօֆ, մուխուճ, տափակ ապը,
Կախէթի լօբին ոսկու ամանը,
Բրդուլ, ձուկ, բրինձ, աճառը,
Ծնէփակ, սվինարին ու ճինճառը:
Բլոմա ննգզով գօլօ-նանը,
Նուշ բեշմեշով բրնձէ փլաւը.
Ձէթով տապկած կարտոփիլը՝
Ձէթիս խիլօն ու ֆոնջոլը:
Գողրա ճարխալը ու գաղաղը,
Բոխկով կանանչին լէ բադալը,
Թըթու կօմբոստօն, զոխն ու բոխը,
Բադրիջան, խիար, կծու ծիծակը:
Էսաունք բերից մեր մենձ պասը:
Հիգն էլ համով հանէ ապասը:
Թասով թխած խմոր տապակը,
Բրինձ ու չուրչով սիսեռ կօլօլակը:

II

Վաղ վերկացու տան տիկինը,
Մոխրաջրով լուացրից պղինձը.
Պղնձկարգը մէ մէկ ջոգից
Զինուր, աման, քիզան թասը,
Սկէսուր Մաթօն ձէնով կանչից,
Տուկրա տուկրա հարսին խրատից.
Ամեն աման, քափկիր գդալներ,
Շերեփ, սինիք ու մաթրաթներ,
Կլէքչու նման լաւ խառկէ,
Եգից, ճրագուից խապանի անէ,
Շամփուր, դանակ ու չանգալներ,
Սաթուլ, քամիչ ու հաւանգներ:
Սաղ երկու օր, նա կար չանէ,
Տունն ու տիղը լաւ խառկէ,
Զարերշաբթի ճաշվայ ժամին
«Տէր ամենակալ» աղօթքը յիշէ:
Հինգ շաբթի ու ուրբաթ օրը,
Սալմայ սապնով անէ լացքը,
Միտս պահէ պասի օխտը:
Շարաթ. տաւս, պատարագ է,
Մեռելներուն օսկէ թաց է,
Մեռլատերը ծանդիլ բաժնէ.
Թունդ ու մումով մեռլին յիշէ:
Կիրակին խօմ Աստու օրն է,
Բարդիդանքի «սծօրի» օրն է,
Օխտը թեաւուր «բօբօլ» չարխից.
Մէ հատ թեր քամին տանէ:
Աչօթք անէ Աստուած կանչէ,
Օխտը շաբաթը խասակ պահէ,
Մենձ պասը, կօսէ, պատիկն էլ հիգը.
Աթաղան բարաղան քարէ պուտէ:

*Պապլիս Թոռը*

---

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

### ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

*(Շարունակութիւն)*

III

Կայարանից կառք վարձելով՝ ճանապարհ ընկայ դէպի այնտեղ, ուր լեռները հեռուից սպառնում էին, ձիւնապատ գագաթներով ինձ նման ճանապարհորդներին էին հրաւիրում, բնութիւնը վայելելու, ապրելու: Եւ ես գնա հեռուից—հեռու երեւակայում էի, թէ ինչպէս է կեանքը ծաղկում այնտեղ և թէ ինչքան երջանիկ են ապրում այնտեղ մարդիկ:

Կառքում անզգուշաբար էինք ես և մի պատահական ուղեկից: Ուղեկիցս իրենից մի առանձին բան չէր ներկայացնում. միայն նրա երեսին նստել էր մի քիթ, որին Փոքր Մասիս անունը կարելի էր տալ. և ամեն անգամ, երբ ես նայում էի նրա քթին, զարմանում էի, թէ ինչպէս է պատահել, որ Պուրիշկեւիչն անտես է արել մի այդպիսի խոշոր փաստ և Կովկասեան հարցապնդման ժամանակ չի շահագործել այդ քիթը: Չէ որ այդ մարդը կռիւների ժամանակ կարող էր իւր քթի յետեւն ապահովաբար դիրք բռնել, կռուել և պատառ մնալ ամեն տեսակ գրոհներից: Կամ ինչու Մէնշիկովը չի գրել այդ մասին, օրինակ այսպիսի մի բան.—Կովկասցիներն օժտուած են մեծ մեծ քթերով և նրանք սեռական ընտրութեամբ աւելի ու աւելի են զարգացնում մարդկային այդ հինգ օրգաններից մէկը, հատուկներից՝ ռազմական անհեղ դիրքեր առնելու: Ապագայի խոշոր վտանգների առաջն առնելու համար, հարկաւոր է չարիքն սկզբում խեղդել. ուստի, արդարադատօրէն, անհրաժեշտ է կամ կտրել, կամ, գոնէ տաշել նրանց քթերը:

Բայց ով որ այդ մասին չէր մտածել, կամ Տիմօշկինը չէր տեսել և չգիտեմ ուղեկիցս ինչ էր մտածում միմեանցից բաժանուելու րոպէին, միայն ես նրան ջերմաջերմ խորհուրդ տւի գնալ արտասահման, զանազան բարդութիւնների տեղիք չտալու համար:

IV

Երկրորդ օրուայ կէսօրին հասայ գիւղ-այդտեղ ապրում էր հարուստ կալուածատէր Տոկոսեանը, մի յայտնի ազատամիտ ու մարդասէր մարդ: Տոկոսեանն ինձ ընդունեց զուարթադէմ, ջերմագին սեղմեց ձեռքս ու տուն հրաւիրեց, որ գիւղի մի ծայրում եռայարկ, գեղեցիկ շինութիւն էր, շրջապատուած կանաչ ծառերով ու եդեմական պարտիզով: Հիւրընկալս իսկոյն թէյ պատուիրեց և մինչև սամավարը կը բերէին, որին կարօտում էի, մենք նստած վարդի ճոխ թփերով զարդարուած պատշգամբին, խօսում էինք հետաքրքիր նիւթերից:

Պէտք է խոստովանել, Տոկոսեանը դուրս եկաւ մի վերին աստիճանի լուսամիտ մարդ, առաջ դատողութիւններ էր տալիս, հողային խնդրի մասին ունէր խոր, բազմակողմանի ծանօթութիւն և ես համոզուեցի, որ նրա կալուածքում բանուորները, եթէ սոված են մնում, այդ միայն իրենց յիմարութիւնից է: Եւ Տոկոսեանի զանգատը գիւղացիների անխրատութեան մասին, ես իրաւացի էի գտնում և նրա պէս ողբում, երբ մարդկից ու թոկից էր խօսում... և երբ նա իր լուսեղէն դատմունքներն ամբողջովին պարզեց, ասացի.

—Այո, բարեկամ, գլխից մեծութիւնն ու քաղաքակրթութիւնը կատարելապէս ապացոյց են, որ դու սովորական մարդ չես, այլ՝ շատերից հնադարեան մինօտաւրների և քո մտաւոր իմպօտէնտութիւնն անպայման խոշոր առաւելութիւն է: Այնուամենայնիւ քո թէյդ ախորժակով կը խմեմ, թէև մարդկի հոտ է գալիս այնտեղից:

**Մասագոր**

---

## ԱՆԴԻ ՄՈՒԽԱՄԲԱՋՆԵՐԻՑ

I

Փառքը,—դա մի բարձր սար է,
Վեր ելնելը շատ դժւար է,
Վա՜յ է, թէ որ ոտըդ սըլքի,—
Էլ փրկիլը անհընար է:

II

Փառքը,—դա խիստ ծանր ցաւ է,
Չիքնար լափող մի ծարաւ է,
Վա՜յ թոյլ հոգուն, որին կըպչի,
Վերջը մահ է,—զուլո՞ւմ ցաւ է:

*Սեւան Եախշի*


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի**

**կոմպլեկտների**

Համար փառահեղ կազմեր և պատկաներ պատրաստ կան Եղ. Սարիբէկեանների կազմատանը, Դվորցովայեա տուն վրաց ազնուականների.

Պատուէրները կարելի է ուղարկել վերադիր վճարով

Գները 1 ր. 20 կ. և աւել:

Юморо-сатирическій журналъ
„ХАТАБАЛА"
Печатается исключительно на бумагѣ
*Товорищества*

**П. В. СЕРГѢЕВА**

Складъ бумагъ въ Тифлисѣ находящейся на Дворцовой ул. въ домѣ Сараджева во дворѣ.
Цѣны бумагъ Фабричныя



# ԱԼՄԵՋԱ

ԶԸ ԼԵՒԱՆ ԽՈՅՇՆԵՐ ԱԶԵԱՐՆԵԱՆԻ ԴԷՄ.

Ալ. երկու րոպէում հանգստացնում է ատամնացաւը։
Ալ. բուժում է լնդերքի հիւանդութիւնները և կանգնեցնում է արիւնը։
Ալ. պնդացնում է լնդերքն ու ատամները։
Ալ. բուժելուց յետոյ ատամները չեն ցաւում։
Ալ. ու. միշտ ոչնչացնում է բերնի հոտը։
Ալ. անհրաժեշտ միջոց է ամեն մի ընտանիքում։
Ալ. առողջ. միջոց է համաճարակների ժամանակ։
Ալ. բազմաթիւ լնդերքներ ...
Ալ. բազմաթիւ ընդունել ...
Ալ. գործածելով այս միջոցով բժշկում ենք ձեզ, ...
Ալ. բաղադրութիւն ...
Ալ. խնդրում ենք չշփոթել ...
Ալ. կարելի է ստանալ ...

Тифлисъ, Пушкинская ул. № 15.

Փաթեթ. տր. գինն է 40 կ., նորմալ տուփը 1 ր. 20. Ներկայացուցիչ ամբողջ Կովկաս և Անդրկասպեան երկրի Ի. Դ. Աֆսարաձէ

Թիֆլիս. ... № 347.

**ПОЧЕРКИ**

Самые неправильные и скверные исправлю ЗАОЧНО каждому въ 15 уроковъ. На бѣглые конторскіе и изящно красивые. Пробное письмо шрифтовъ образцы почерковъ и условія высылаются за 5 семи-коп марокъ. Обращайтесь по русски по адресу: профессору каллиграфіи **А. Коссодо**, Дерибасовская домъ АРМАНА ОДЕССА

**ОПИТНЫЙ**
бухгалтеръ
ищетъ подходящее занятіе
въ Тифлисѣ
*Адресъ Редакціи „Хатабала".*

**С-ДЕ-ЛИСЪ № 4711**
EAU DE LYS
ՍՊԻՏԱԿ, ՎԱՐԴԱԳՈՅՆ ԵՒ ԴԵՂԻՆ ԳՈՅՆԵՐԻ.
Բոլորի կողմից ճանաչուած լաւագոյն միջոց
ԵՐԵՍԸ ԼՈՒԱՆԱԼՈՒ,
թարմութիւնը, երիտասարդութիւնը պահպանելու և երեսի պզուկները և բոլոր անմաքրութիւնները հեռացնելու համար։
**ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ**
**Ферд. Мюльгенсъ**
*Кельнъ н/Рейнѣ. отд. въ Ригѣ*

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ **ԿԼԻՇԷՆԵՐ**
մատչելի գներով ցանկացողները դիմեն
Фото-цинкографія С. Согомонянца
Тифлисъ, Базарная № 20

# ԵՂԲ.
# ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ
# ԵՒ
# ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

*Սանտրական Տան խանութում*
*Նիկոլայեվսկի կամուրջի վրայ, տուն Քամոյեւի*

## ԼԻԿՎԻԴԱՑԻԱ

## ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

Հազար ինն հարիւր ու ինն թւից,
Գարնան Մարտ ամսի տասներկու օրից.
Մենք մտածել ենք ԼԻԿՎԻԴԱՑ անել
Եւ մեր խանութի ապրանքը ծախել
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Ուստի այս օրից, ով Թիֆլիզեցիք,
Եթէ խելք ունէք և ճաշակով էք,
Համ էլ ուզում էք սիրուն բան հագնել,
Մեր Սանտրական Տունը համեցէք։
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Մենք ունենք այստեղ կանանց գլխարկներ,
Այր մարդկանց համար սիրուն հագուստներ,
Երեխաների շորեր ճաշակով.
Անհաւատալի, բաղում էժան գներով։
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Մենք վաճառում ենք տասից մի շահի,
Միայն ձեր օգտին դիմում ենք վնասի.—
Ինչու որ, գործը ուզում ենք փակել,
Եթէ խելք ունէք, օգտուեցէք դէպքից։
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Եւ որ հաւատաք, թէ ճիշտ ենք ասում,
Խնդրում ենք անձամբ գաք ու համոզուէք.
Տեսէք գները ու մտածէք
Էլ որտեղից էժան կարող է ծախուել։
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Եթէ կը գնէք—մենք կը վաճառենք
Եւ մեր խանութի բոլոր սարք ու կարգ.
Շկաֆ ու հայելի, կասսա ու դարակ.
Սանտրատունը հիմքից բարեկարգ։
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Օգտուեցէք դէպքից և աճապարէք,
Նիկոլայեվսկի կամուրջով անցէք,
Յակոբջանների և Սարգսեանցի
Սանտրատունը դուք մի մոռացէք։
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Օգտուեցէք դէպքից, օգտուեցէք դէպքից,
Եթէ խելք, ճաշակ, փողի գաղր ունէք.
Դուք անմիջապէս մեզ մօտ համեցէք
Եւ Զատկի համար էժան զուգուեցէք՝
ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

# ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ
# ԳՐԱՄՄՕՖՕՆ
# ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՀՐԱՊԱՐԱԿ № 9.

*Ով է պահպանում հաւաքոյթներում կենդանութիւն և ուրախ զրոյց։*

*Անկասկած այն գրամաֆօնները, որոնք խնկական զօնօֆօնի և գրամմօֆօնի հարուստ թերթիկներ (պլաստինկա) ունին, վերան արտատպած գործարանային այս պատկերը։*



*Զգիտենալով ձայնանիշներ, ամեն մէկը կարող է ղւարճանալ իր տանը, գեղարուեստական երաժշտական կտորներ կատարելով, օգնութեամբ գրամմաֆօնի։*



**ԽՍԿԱԿԱՆ ԳՐԱՄՄՕՖՕՆ ԻՐ ԹԵՐԹԻԿՆԵՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԸ ՉԵՆ ԶՂՋՈՒՄ**

*Գրամմօֆօնը դառնում է բարեկամ առնողին, իսկ առնողը սիրահար և բարեկամ այս անբասիր երաժշտական գործիքին։*

*Գրամմօֆօն սիրողների և բարեկամների ուշադրութիւնն ենք հրաւիրում, որ շատ կան խօսող մեքենաններ, իսկ «ԳՐԱՄՄՕՖՕՆԸ» միակ արտադրութիւնն է ԳՐԱՄՄՕՖՕՆ յայտնի համաշխարհային ընկերութեան Մօսկվա, Ս. Պետերբուրգ, Խարկով, Ռոստով-Դ. վ, Օմսկ, Թիֆլիզ և Ռուսական կայսրութեան բոլոր քաղաքների երաժշտական խանութների։*

*Պահանջեցէք փետրուարի և մարտի վերջին նորութիւնների և հրատարակութիւնների ցուցակը։ Կատալօգներ, պրէյսկուրանտներ և այլն բաժանւում են և ուղարկւում ըստ պահանջման* **ՁՐԻ**

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՏՕՆԵՐԻՆ, *գնեցէք և ընծայեցէք իրար, ինչպէս ամենալաւ և յարմար նուէր,* **ԳՐԱՄՄՕՖՕՆ**-*ը իր խնկական թերթիկների փոքրիկ հաւաքածուն հետ։*

Ապարատներ կան 30 րուբլուց մինչև 1 0 րուբլի և աւելի թանգ

Թերթիկները 35 կոպէկից մինչև 3 րուբլի և աւելի թանգ

*Հետաքրքրուողներին ամեն մի թերթիկ ցոյց է տրւում ՁՐԻ, ընկերութեան բոլոր խանութներում։*

Գ Ն Ե Լ Ը Պ Ա Ր Տ Ա Դ Ի Ր Չ Է

*Յաճախ լսեցէք ԳՐԱՄՄՕՖՕՆ իր խնկական թերթիկներով և դուք ինքներդ կաշխատէք ձեռք բերել այն։*

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“

ԱՐՏՕՆԻԱԾ



Ամենալաւը Աշխարհում

Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքնաղ ֆասոնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ

ПРОВОДНИКЪ РИГА

1888

Мебельный магазинъ

**БР. ГАЛУМОВЫХЪ,**

*Мадатовская ул., противъ Александровскаго сада*

Имѣется постоянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англійскихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англійскихъ, подносимыхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для передникъ и фантази.
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо“, модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемірно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ“ и „ВОЙЦЕХОВА“, а также дубовыхъ, спеціально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШІЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньеровъ, библіотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**

ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ ЖИВОПИСЦЕВА ВЪ Г. ОРЛѢ.



ԾԱՂԿԻ ՀՈՐԹԱՆՈՑ. Դետրիտի սրուակը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խողովակի մէջ—5 մարդու համար՝ 5 կոպ.։ Մի սրուակից պակաս—չէ վաճառւում։ Ճանապարհածախսի համար—30 կոպ։ Երեք սրուակից աւելի ուղարկւում ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶԵՂՉ մինչև 20 տոկոս. հասցէն՝ Օրեօլ քաղաք, Ծաղկի Հորթանոց Ժիվոպիսցեւի

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի

Կոմպլեկտներ փառաւոր կազմած

1906 թւի արժէ 5 ր.
1907 թւի » » 7 ր.
1908 թւի » » 7 ր.

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխավճար 3 ր. որոնց կուղարկենք վերադիր վճարով։

ПЕРВАЯ

художественная хромо-литографія

**С. БЫХОВА**

*Тифлисъ, Головинскій просп. около цирка*

Печатаются всевозможныя литографскія работы въ разныхъ стилях.
Также всевозможные ярлыки спеціально для водочныхъ и винныхъ складовъ и. т. п.

ПО САМЫМЪ УМѢРЕННЫМЪ ЦѢНАМЪ

Работы исполняются лучшими европейскими мастерами


Խմբագիր-հրատարակող՝ ԱՐՏ. ԵՐԻՑԵԱՆ Скоропечатная „Дзмоба“ Московская ул. № 5.

## ՊՈԼՍԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԻՏԻՆԳ



Ժամը տօր միթինկ էր,
Ազատութիւն կխօսէր.
Թուրք պէյերէն· երկուսը,
Գլուխնին գրած ու ֆէսը,
Բեմին վրայ սէգօրէն
Սիգարանիւք կծխէն.
Հայ ամբոխն ու յառաջին
Միաժամորդներ բերողներն,
Փոխան խունկի, կնդրուկի
Մուխ կծխէն ծխիծխինի.

## Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ ԱՇՏԱՐԱԿՈՒՄ
## ԻՐ ԵՂԲՕՐ ՍԱՐԻԲԷԿԻ ՏԱՆԸ




Սարօ, ապերախտ, յետ տուր իմ ազգին
Ինձ նուէր բերած փողի գումարը.
Թէ չէ գիշերւայ ամեն այս ժամին
Կուգամ խռովել քո քաղցր քունը.

## ԲԱԳՎԻ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐԻՑ




*Ու՞ր էք առաջ փախչում, խեղճ ծառի կոճղեր,*
*Լայն լայն թիկունքներ, հաստլիկ մեջքեր,*
*Մեզ համար մեկ է, ձեզ թալանում են,*
*Այստեղ շանտաժը — այնտեղ աղջիկներ.*

## ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏԻՆ



*Սիրում եմ քո նուէրը,*
*Ջհաննամ քանդուած տները.*
*Որ ավրէին տանջուելով,*

*Կեանքը մի կերպ քարշ տալով,*
*Օգուտն ինչ էր, հոգի ջան,*
*Ողջը մէկ էր, դատարկ բան.*

*Ջահաննամ քանդուած տները,*
*Մեզ նուէր բեր ժամերը.*